

ԲԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ PHILOLOGY ФИЛОЛОГИЯ

ZS7 821.111

DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ ԷԹՆԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՔԱՆՈՒՄ

Նելլի Բակուրի Գալստյան

Ա. Խորենացու անվան համալսարան, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախարան. Հոդվածը նվիրված է հայ-ամերիկյան էթնիկ գրականության հարցադրումներին, որոնցում կարևորագույն տեղ են զբաղեցնում ամերիկահայության առջև ծառացած բազում հոգեբանական խնդիրները, սերնդեսերուն փոխանցված ավանդույթների, սովորույթների, կենսափորձի, վարքութարքի, հավատալիքների պահպանումը, ազգը շարունակաբար վերածնող, վերախմաստավորող, վերականգնող էթնիկ հիշողությունն ու մշակույթը: **Մերողներ և նորութեր**. Հոդվածում կիրառվել են պատմահամեմատական, կառուցվածքային-տիպաբանական մեթոդները, օգտագործվել ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները: **Վերլուծություն**. Յուրաքանչյուր ազգի գրականության մեջ առանձնակի կարևոր տեղ է գրավում իր ազգային ինքնության թեման: Ազգային ինքնությունն էթնիկական և փիլիսոփայական հասկացություն է, որտեղ բոլոր մարդիկ բաժանվում են ազգեր կոչվող խմբերի: Ազգի անդամներն ունեն ընդհանուր ինքնություն և սովորաբար ընդհանուր ծագում՝ նախնիների, ծնողների կամ ծագման իմաստով: Էթնիկ փոքրամասնությունները դիտարկվում են որպես նորեկներ, որոնք գտնվում են ինտեգրման գործընթացում [7, թ. 13]: Յուրաքանչյուր ազգ ունի իր սեփական հոգեբանությունն ու նկարագիրը, բարքերն ու սովորույթները, ապրումները: Ազգը հզոր է ու անվանի իր որակական խտացյալ արժեքներով ու հստակություններով: **Արդյուններ**. Ազգն է սկզբնաղբյուրը ժողովրդի ու ազգի մտավոր և հոգևոր ստեղծագործությունների: Առանց ցեղային ինքնատիպության՝ չկա ինքնահասուկ և ինքնադրոշ արվեստ կամ այլ ստեղծագործություն: Ժողովրդի և ազգի մեջ որքան զորավոր են ցեղն ու ցեղայինը, այնքան առանձնահատուկ է, գունագեղ ու գրավիչ է ամեն ստեղծագործություն: Ցեղի հանրեալ պարտավորվածությունն ու գենային արժեքներն

են ձևավորում ազգային մտածողությունն ու արժեհամակարգը, որոնք ել, իրենց հերթին, ձևավորում են գրականությունը:

Բանալի բառեր՝ ազգային ինքնություն, ազգային արմատներ, ժամանակի պարտադրանք, ամերիկահայ անզլազիր գրողներ, մարառումներ, ներաշխարհ, զոյափիլիխովայություն, ցեղասպանության ճանաչում:

Ինչպես հղել՝ Գալստյան Ն. Հայ-ամերիկյան էթնիկ գրականության հարցադրումները 20-րդ դարի ամերիկյան գրականության համատեքսում. // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 2 (27): 68-79 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

QUESTIONS OF ARMENIAN-AMERICAN ETHNIC LITERATURE IN THE CONTEXT OF 20TH CENTURY AMERICAN LITERATURE

Nelli B. Galstyan

University after M. Khorenatsi, Yerevan, RA

Abstract

Introduction: The article touches upon the issues of Armenian-American ethnic literature, in which the most important place is the many psychological problems faced by American Armenians, the preservation of traditions, customs, life experience, manners, and beliefs passed down from generation to generation, the ethnic memory and culture that continuously revives, reinterprets, and restores the nation. **Methods and materials:** Historical-comparative, structural-typological methods were used in the article as well as modern studies and new achievements in the field.

Analyses: In the literature of each nation, the topic of its national identity occupies a significant place. Members of a nation share a common identity and usually a common ancestry, in the sense of ancestors, parents, or descent. Ethnic minorities are seen as newcomers in the process of integration. Each nation has its own psychology and origin, manners and customs, feelings. The nation is powerful and famous for its qualitative concentrated values and clarity. **Results:** The nation is the source of all intellectual and spiritual creations of the people and the nation. Without tribal originality, there is no unique and distinctive art or other creation. Commitment to the tribe and genetic values shape the national thinking and value system, which, in turn, shape the literature.

Key words: *national identity, national roots, compulsion of time, American-Armenian English writers, extortions, inner world, existential philosophy, recognition of genocide.*

Citation: Galstyan N., *Questions of Armenian-American Ethnic Literature in the Context of 20th century American Literature.* // “Scientific works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2(27). 68-79 pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

ВОПРОСЫ АРМЯНО-АМЕРИКАНСКОЙ ЭТНИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЫ В КОНТЕКСТЕ АМЕРИКАНСКОЙ ЛИТЕРАТУРЫ XX ВЕКА

Нелли Б. Галстян

Университет им. М. Хоренаци, Ереван, РА

Аннотация

Введение: Статья посвящена вопросам армяно-американской этнической литературы, в которой важнейшее место занимают многочисленные психологические проблемы, с которыми сталкиваются американские армяне, сохранение традиций, обычаяев, жизненного опыта, нравов и верований, передаваемых из поколения в поколение. Этническая память и культура, которую постоянно возрождают, переосмысливают и восстанавливают нацию. Методы и материалы. В статье использованы историко-сравнительный, структурно-типологический методы, использованы современные исследования и достижения. Анализ: В литературе каждого народа тема его национального самосознания занимает особенно важное место. Национальная идентичность — это этническая и философская концепция, в которой все люди делятся на группы, называемые нациями. Члены нации имеют общую идентичность и обычно общее происхождение в смысле предков, родителей или происхождения. Этнические меньшинства рассматриваются как новички в процессе интеграции. [7, с. 13]. Как у каждого человека, так и у нации есть своя психология и профиль, манеры и обычаи, чувства. Нация велика и знаменита своими концентрированными качественными ценностями и ясностями. Результаты. Нация является источником всех интеллектуальных и духовных творений народа и нации. Без племенной самобытности не может быть уникального и самобытного искусства или другого творения. Чем могущественнее племя и род в народе и нации, тем особенное, красочнее и привлекательнее каждое творение, именно приверженность племени к генетическим ценностям формирует национальное мышление и систему ценностей, которые, в свою очередь, формируют литературу.

Ключевые слова: национальная идентичность, национальные корни, принуждение времени, американо-армянские англоязычные писатели, внутренний мир, экзистенциальная философия, признание геноцида.

Как цитировать: Галстян Н. Вопросы армяно-американской этнической литературы в контексте американской литературы XX века. // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 68-79 сс.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-68

ՆԱԽԱԲԱՆ. Հայ Սփյուռքը, այդ թվում՝ նաև ԱՄՆ-ի հայ համայնքը, Հայոց ցեղասպանության հետևանքն է: ԱՄՆ-ի հայ համայնքը ձևավորվել է 19-րդ դարի 70-ական թթ. վերջին: 1886թ.-ին Նյու Յորքում հիմնադրվել է «Հայկական միությունը», որի նպատակն էր «ամերիկաբնակ հայոց մէջ միութեան կապ հաստատել, ազգային զգացումներ մշակել եւ ազգօգուտ ձեռնարկներ ընել» [[2, էջ 174]: Միությունը կարևոր դեր է կատարել ԱՄՆ-ում հայությանը ձուլման վտանգից գերծ պահելու, նրա ազգային ինքնազիտակցությունը պահպանելու գործում: 1890-ական թթ.-ին Օսմանյան կայսրության կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով հայերը զանգվածաբար գաղթել են ԱՄՆ:

Սփյուռքահայ գրականությունն աշխարհի տարբեր գաղթօջախներում 20-րդ

դարի 10-ականների վերջերից մինչև 30-ականների կեսերն սկիզբ առած գրական շարժում է, որն ունեցել է զարգացման մի քանի փուլ: Առաջին փուլին բնորոշ է հայրենի հողի կարոտի գրականությունը, որն ուներ ընդգծված գյուղագիտական միտում: Ինքնակազմակերպման և ինքնագիտակցության ձևավորման մակարդակում սկսում են տիրել ձուլման վտանգը և այն հաղթահարելու մտահոգությունը (Երկրորդ փուլ): Երկրորդ աշխարհամարտի և հետապատերազմյան տարիներին դրվում են պայքարի, հայրենասիրության և ստեղծագործական վերելքի սիյուռքահայ նոր գրականության հիմքերը: Այն, կարոտի, հայրենաբաղձության, ձուլման դեմ պայքարող գրականություն լինելուց բացի, դառնում է նաև համամարդկային արժեքներ կերտող, սիյուռքահայ մարդուն համամարդկային ինքնատիպ դիմագծերով արտացոլող գրականություն: Սիյուռքահայ գրականությանը բնորոշ են ոչ միայն գեղագիտական, գեղարվեստական և քաղաքական-գաղափարական ինտիրների արծարծումը, այլև յուրահատուկ լեզվաշինարարությունը: Նշանակալի է նաև սիյուռքահայ գրականության դերն օտար գրականությունը հայերին և հայկականն այլ ժողովուրդներին ներկայացնելու գործում, որոշակի է նաև սիյուռքահայ օտարակեզու գրականության դերը:

20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայից հայկական ջարդերի հետևանքով հազարավոր հայ զաղթյալներ համալրել են հայկական համայնքը, որը մինչ օրս է, սոցիալ-քաղաքական հանգամանքներով պայմանավորված, համալրվում է: Առաջին իսկ օրից ԱՄՆ-ի հայկական համայնքի առջև ծառացել են քազմաթիվ մարտահրավերներ: Առավել բնորոշ ինտիրներից են ազգային ինքնության, ինքնագիտակցության պահպանումը, հայկական համայնքի միավորումը՝ որպես քաղաքական գործոն, որոնց լրւծումներից են կախված ԱՄՆ-ում բնակվող հայության պահպանումը, ձուլման վտանգի չեղոքացումը: Զուլման հիմնական չափանիշն այն աստիճանն է, որով ներգաղթյաները նույնանում են իրենց բնակության երկրի հետ, կիսում են նրա «հավատքը», ընդունում են նրա մշակույթը և, համապատասխանաբար, մերժում իրենց նախկին հավատարմությունն ու կապվածությունը հայրենի երկրին, ավանդույթներին և մշակույթին, որին պատկանում էին: ԱՄՆ-ում հայերի ազգապահպանման հիմնական գրականը «Հայկական միությունից» հետո եղել է 1917 թ-ին Միհրան Սվազյանի շանքերով Բոստոնում հիմնադրված «Ամերիկայի հայ ազգային միությունը», որն իր 87 մասնաճյուղերով համախմբել է բոլոր քաղաքական, եկեղեցական, քարեսիրական խմբավորումներին, հրատարակել և տարածել հայանպատ գրականություն՝ մեծ դեր կատարելով ազգապահպանության գործում: Մեկը մյուսի հետևից լրւյս են տեսել հայալեզու և անգլակեզու թերթեր («Արեգակ» 1888, «Քաղաքացի» 1889, «Նոր Կեանք» 1914-1919, “The Armenian Herald” 1917-1919, «Հայրենիք» 1889թ.-ից մինչ օրս, «Ասպարեզ» 1908թ.-ից մինչ օրս, «Արօր» 1919, «Նոր Կեանք» 1919, «Նոր օր» 1922, «Հայաստանի կոչնակ» 1900-1968, «Մասսիս» 1980 և այլն), ամսագրեր («Հայրենիք» ամսագիր, «Նոր Գիր» գրական հանդեսը 1936թ.-ին և այլն), որոնցից շատերը դեռևս հրատարակվում են՝ կապող օդակ լինելով ոչ միայն ամերիկաբնակ հայերի, այլև ողջ հայության համար: Հայապահպանման գործում իր անուրանալի դերն է ունեցել հայ եկեղեցին, որը եղել է հայեցի դաստիարակության հիմնական օջախը: Հայոց եկեղեցուն էր վերապահված հայկական դպրոցների ստեղծ-

ման ու պահպանման առաքելությունը: Ազգապահպան մյուս կարևոր գործոնը ազգային դիմագիծն ու բնավորությունը պահպանող մշակույթն է: Հավատարիմ մնալով ազգային մշակույթին և կրոնին՝ հայերը միշտ ցուցաբերել են ձկունություն և տարրեր հանգամանքներին հարմարվելու զարմանալի կարողություն, կարողացել են պահպանել իրենց ազգային ավանդույթները, հավատքն ու լեզուն:

«Ներթափանցելով հեռավոր երկրների կյանք,-գրում է ազգագրագետ Վ. Միքայելյանը, – իրականացնելով ծավալուն տնտեսական և մշակութային գործունեություն՝ աշխարհի ժողովուրդներից քչերին է հաջողվել պահպանել ու նոր պայմաններում զարգացնել իրենց ազգային ինքնությունն ու ինքնատիպ մշակույթը» [10, էջ 123]:

Սփյուռքահայ գրականությունը, չնայած արևմտահայ գրականության հետ ունեցած ներքին միասնականությանը, ձեռք բերեց նաև նոր հատկանիշներ, որոնք թելադրվում էին կյանքի նոր պայմաններով: Նախկին արևմտահայը այժմ սփյուռքահայ էր՝ ամերիկահայ, ֆրանսահայ, լիբանանահայ..., և պարտադրված էր ապրել նոր աշխարհի օրենքներով: Այլևս բնիկ չէր, չուներ իր հայրենի հողը, զաղթական էր: Սոցիալ-քաղաքական նոր գոյավիճակը նրան թելադրում էր կենսապայքարի նոր ձևեր: Բազմաթիվ էին նրան մտատանջող հարցերը. ի՞նչ է անելու այդուհետ, ինչպես է հայթայթելու օրվա ապրուստը, արդյո՞ք կարող է օտար հողում պահել իր ազգային ինքնությունը, մայրենի լեզուն, իր զավակներին կարո՞ղ է տալ հայեցի կրթության, արդյո՞ք մի օր պիտի հաղթի արդարությունը, որ ինքն իր հայրենի տունը վերադառնա: Այս հարցականներին պիտի պատասխան տար հայ մտավորականը, հայ գրողը պիտի գրականության մեջ կերպավորեր սփյուռքահայության այս նոր հոգեվիճակը: Գրականության հերոս պիտի դառնար իր գոյատևության համար տքնող, անկամորեն ուժացող կամ ուժացման վտանգի դեմ պայքարող, կորցրած հայրենի տան կարոտից տառապող ու վերադարձի հույսը փայփայող սփյուռքահայը՝ իր ճակատագրի մասին մտատանջող խոհերով:

Հայ ազգային-մշակութային կյանքը, մասնավորապես՝ գրականությունը, ԱՄՆ-ում ձևավորվել է 20-րդ դարի 20-ական թվականներին: Ամերիկան այն երեք գաղթօջախներից էր, որտեղ կյանքի հրամայականով, շնորհիլ արևմտահայ վերապրած և սփյուռքահայ առաջին սերնդի գրողների, ստեղծվեց սփյուռքահայ գրականությունը: 20-30-ական թթ. Ամերիկա ներգաղթած երիտասարդ գրողներ Համաստեղը, Վահե Հայկը, Բենհամին Նուրիկյանը, Հակոբ Ասատուրյանը, Արամ Հայկազը, Անդրանիկ Անդրեասյանը հիմք դրեցին կարոտի գրականության, նրանց հարեցին Հակոբ Մնձուրին (Պոլիս), Վազգեն Շուշանյանը, Շավարշ Նարդունին (Ֆրանսիա) և այլք: Օտար եզերքներում օտարներին չձուլվելու, ազգային ինքնությունը պահելու նպատակով կարոտի գրողներն իրենց ստեղծագործություններով փորձեցին արթմնի պահել երկրի հիշատակը, հետոքարձի հույսը՝ պատկերելով կորած հայրենիքը, հարզատներին, «անցյալ» կյանքը՝ անդարձ կորած հայրենիքը փոխարինելով հոգևոր հայրենիքով:

30-ական թթ. սփյուռքահայ հայագիր գրականությանը զուգընթաց սկսեց զարգանալ հասարակական նոր կենսապայմաններով ու կեցությամբ պայմանավորված անգլագիր գրականությունը: Առաջին օտարագիր հայ գրողը Խաչատուր Ոսկանյանն էր, որը՝ որպես Թուրքիայի հյուպատոս, 1834 թ.-ին Պոլսից եկել էր Նյու Յորք, ծավալել

հայանպաստ գործունեություն, եղել մաքսատան պաշտոնյա, մամուլի նախագահ, «Նյու Յորք Շերալդ» պարբերականում անգլերենով տպագրել ինչպես ամերիկյան իրականությունը, այնպես էլ հայ անհատի դեգերումները, նրա միայնությունը պատկերող պատմվածքներ և «Սուլթանն ու իր ժողովուրդը» պատմածանաշողական գիրքը՝ հիմք դնելով օտարագրության, որը մեծ թափով սկսեց տարածվել ու զարգանալ՝ 20-րդ դարի 30-ական թթ.-ից սկսած:

Հաղթահարելով լեզվական բարդույթները՝ հայ գրողներից շատերը մաս կազմեցին անգլագիր գրականության՝ իրենց ստեղծագործություններով հարստացնելով ամերիկյան մշակույթը։ Նրանցից ոմանք անգլալեզու գրականությամբ հաճախ միտումնավոր արձարձում էին հայկական թեմաներ՝ իրենց առջև դնելով երկու հիմնախնդիր՝ օտար ընթերցողին ճանաչել տալ դարավոր պատմություն ունեցող եղեննատես հայ ազգին, ազգայինց հեռացածներին ներգրավել ազգային կյանք։ Նրանցից ոմանք էլ ինչ-ինչ պատճառներով հեռացան ազգային ավագանից՝ անդամագրվելով օտար գրականության։ Ազգությամբ հայ գրողները՝ հայագիր թե օտարագիր, իրենց վրա էին կրում ժամանակի գրական ազդեցությունը, հետևում այն գրական ուղղություններին և դպրոցներին, որոնք արտացոլում էին ժամանակի կյանքը, ընկերային, հասարակական հարաբերությունները, ընդունում անհատի դրաման, նրա հայացքները, նրա ունեցած դերն այդ հասարակության և առկա իրավիճակների մեջ։ Միանգամայն հասկանալի էր. ելնելով կյանքի մարտահրավերներից, օտարացվածությունից՝ ամերիկահայ հայագիր և անգլագիր գրողները առաջնությունը տալիս էին գոյափիլսովայությանը և «նոր գրականության» հայացքներին։ «Գոյափիլսովայության գիսավոր թեման, – ինչպես նշում է Բ. Գալստյանը, – մարդու անհատական կեցությունն է՝ նրա կյանքի իմաստն ու ձակատագիրը։ Գոյության փիլսովայությունն արտացոլում է իր սեփական կեցությունն իմաստավորելու մարդու պահանջը, որը մի առանձին սրությամբ իր արտահայտությունն է գտնում նրա գոյությանը սպառնացող իրավիճակներում, երբ մարդու համար իր ձակատագիրը վերացականությունից թանձրանում է մինչև լինել-չլինելու անխուսափելի խնդիրը» [1, էջ 4]:

Ամերիկյան բազմազգ խառնարանում, որը Սփյուռքի մյուս գաղթօջախներից զանազանվում էր տարբեր մշակութային ավանդույթներով, սովորույթներով, պարտադրող մշակույթով, առաջ եկավ նոր ամերիկյան և ազգային-ծագումնաբանական երկվության խնդիրը։

Ամերիկյան գրականության մեջ, սկսած 20-րդ դարասկզբից, իր մնայուն տեղը հաստատեց ազգային ինքնության, ազգապահպանության թեման, որն առավել կարևոր է հատկապես փոքր ազգերի ու ժողովուրդների համար, որոնց կենսագործունեությունը, խարսխված է կյանքի կազմակերպման առավելապես ավանդական-մշակութային, քան ժամանակակից սոցիալական մեխանիզմների վրա [3, էջ 31]:

Ա.Հանթինգտոնի «Ովքե՞ր ենք մենք» հարցադրումը, որի շրջանակներում հեղինակը, ուսումնասիրելով ամերիկյան ազգային ինքնությանն ուղղված մարտահրավերները, ինքնությունը դիտարկում է որպես հասարակության համախմբման ձանապարհին յուրօրինակ բանալի։ «Ազգային ինքնության գիտակցումն արտաքին սպառնալիք-

ների ազդեցությամբ կարող է աճել և անկում ապրել, իսկ այդ ինքնության էությունն ավելի քիչ է ենթակա տատանումների. այն ավելի դանդաղ է ձևավորվում...» [8, էջ 326]:

Իսկ ահա Չոն Հեթֆիլդը, ի պատասխան «Ովքեր ենք մենք» հարցադրմանը, իր «Ինքնությունը որպես էրնիկական ուսումնափրությունների տեսություն և մեթոդ» աշխատության մեջ ինքնությունը դիտարկում է որպես մարդու գոյության և կեցության գրավական, մարդուն՝ կենսաբանական, սոցիալ-մշակութային և հոգեբանական էակ, որը դեռևս ապրում է էրնոլենտրոն աշխարհում, որտեղ կենսաբանական և մշակութային ինքնությունները նույնականացվում են, դիտվում որպես մեկ միասնական ամբողջություն: «Յուրաքանչյուր ոք, -նշում է Հեթֆիլդը, -ով ցանկանում է գտնել իր իսկական ինքնությունը, պետք է կանգնի ավանդույթի, մշակույթի և նույնիսկ նույնականացման պարադրամի միջև» [6, էջ 31]:

Ինքնությունը բազմազգ, բազմամշակույթ Միացյալ Նահանգներում դրսևորվում է ընդհանուր քաղաքական հայացքներում: Ներգաղթը հիմք հանդիսացավ ազգային ինքնության ձևավորման համար, որը միավորեց ամերիկյան արժեքները, աշխարհայացքը և համոզմունքները: Մշակութային բազմազանությունը դարձավ ազգային ինքնության հենքը. ձևական գործընթացում ռասսայական և էրնիկ կազմավորումները պահպանեցին իրենց ինքնությունն ու ավանդույթները:

ԱՄՆ-ում հաճախ ազգային ինքնությունը նույնացվում է քաղաքական հայացքների, մտածողության հետ՝ ի տարբերություն էրնիկ պատկանելության, որն ավելի սերտորեն կապված է իր ժողովրդի ավանդույթին և մշակույթին: «Հաճախ էրնիկ ինքնությունը հակասության մեջ է մտնում ազգայինի հետ: Ազգային ինքնությունը լիովին ձնշում է էրնիկ ինքնությանը, – գրում են Ս.Պետերսկայան և Ա.Շեպիլիկինը, – ինչը հանգեցնում է անհատի ներքին կոնֆլիկտին, որը գտնվում է որոշակի էրնիկ խմբի սկզբնական պատկանելության և ամերիկյան հասարակության անդամի դիրքի միջև սահմանային վիճակում» [11, էջ 92]:

Ամերիկյան մշակույթը կազմված է Միացյալ Նահանգներում բնակվող ազգերի մշակույթների տարրերից: «Այն, – ինչպես նշում է Վ.Շետակովը, – տարբեր մշակութային գործընթացների բարդ սինթեզ է, որը նպաստում է տարբեր էրնիկ խմբերի վերափոխմանը ամերիկյան ազգի» [13, էջ 115]:

ԱՄՆ-ը բազմամշակութային համադրությունների և հակադրությունների մի հսկա դաշտ է, որտեղ ապրող յուրաքանչյուր ազգություն միանգամայն ազատ կարողանում է ներկայացնել իր արմատների կանչով համեմված արվեստը, ավանդույթներով հարուստ մշակույթն ու հնամյա պատմությունը: Այս ամենի գեղեցիկ ներդաշնակության արդյունքում ծնվում է տվյալ ազգի բազմամշակութային գրականությունը, որն արտացոլում է ինչպես սեփական երկրի, այնպես էլ ԱՄՆ-ի հասարակության նորմերն ու նորօրյա խնդիրները՝ իրենց բազմաբնույթ լուծումներով:

Հայ-ամերիկյան գրականության տարածմամբ և զարգացմամբ նոր հեռանկարներ ու ակադեմիական մի շարք հնարավորություններ բացվեցին: Այս խառնածին գրականության միջոցով հայ հեղինակները լավագույնս ներկայացրին իրենց ժողովրդի անցած պատմական, մշակութային, կրթական և սոցիալ-հասարակական դժվարին ձա-

նապարհն ու լույսի այն հանգրվանը, որտեղ, չնայած ինքնության պահպանման միշտը խոշնորտներին, նրանք կարողացան արարել ու ստեղծագործել բոլորովին նոր հայեցակարգերով, որոնց մատակարարը մեծն ԱՄՆ-ն էր:

Ամերիկյան ժողովրդավարական հայացքներն ու զաղափարները հիմք հանդիսացան այլազգի մարդկանց համար՝ ազատ արտահայտվելու և լսելի դարձնելու իրենց ձայնն ամենուր: Տարբեր ազգերի գրականության շատագովները իրենց ստեղծագործությունների միջոցով բարձրածայնում էին ընդհանուր խնդիրները՝ գենեզիս, իրենց ազգային գրականության զարգացում, գրականության ավանդույթներ և այլ հարցեր: Ամերիկյան քննադատությունն էլ, իր հերթին, վերոնշյալ գրականությունները հիմնականում դիտարկում է կառուցվածքային և հետկառուցվածքային մոտեցմամբ, որի գլխավոր խնդիրն է ուսումնասիրել տեքստի կառուցվածքը, ինչպես նաև՝ նրա ապակառուցվածքը:

«Էթնիկ խմբի ինքնությունը որոշող հիմնական գործոնը մշակույթն է, – գրում է Ա. Սադրովինը, – մշակույթի ոլորտում է, որ սովորաբար կենտրոնանում են էթնիկ խմբերի բոլոր հիմնական տարբերակից գծերը» [7 էջ 344]: Մշակույթն է, որ արտացոլում է տվյալ ժողովրդին բնորոշ բոլոր կենսակերպերը և գործոնեությունը աշխարհում, ինչպես նաև մարդկանց միջև հարաբերությունները (սովորույթներ, ծեսեր, հաղորդակցության առանձնահատկություններ և այլն) և աշխարհը տեսնելու, հասկանալու և փոխակերպելու ուղիները:

Ի տարբերություն ամերիկյան մշակույթի՝ հայ մշակույթը դարեր շարունակ պետության երկարատև բացակայության պայմաններում անզամ կատարել է պետական հանձնառություն. պահպանել է լեզուն, կարգավորել միջանձնային հարաբերությունները, կազմակերպել հանրային կյանքը, սերունդներին փոխանցել ազգային ավանդույթներն ու սովորույթները, ազգային մտածելակերպը, ստեղծել ժողովրդի ֆիզիկական և հոգեբանական պաշտպանության մեխանիզմներ [4, էջ 31]:

Մ. Դեմիրճյանն իրավացիորեն նշում է, որ թերևս դրանով է բացատրվում հայերի գիտակցության մեջ մշակույթի՝ որպես ազգապահպան երևույթի մասին արմատավորված պատկերացումը, և պատահական չէ, որ մշակույթի պահպանումը և վերարտադրությունը համարվել են հայ ազգի պահպանման և գոյատևման երաշխիք: Մշակույթն իր հետքն է թողել հայերի ազգային հոգեբանության վրա, ազգային ինքնագիտակցության մեջ եղել է համախմբող գործոն: Աշխարհի տարբեր ծայրերում, ինչպես նկատում է փիլիսոփա Դեմիրճյանը «Հայ ազգային ինքնությունը և Սփյուռքի գործոնը գլոբալացվող աշխարհում» հոդվածում, մշակութային օջախների ստեղծումը, ամենայն հավանականությամբ, հանդես է եկել որպես մյուս ժողովրդակցություններից հայերի օտարումը կանխող գործոն, ինչը միանգամայն հնարավոր էր պատմական և, առհասարակ, մարդկային հրեշտակոր ոճրագործության՝ ցեղասպանության և դրան հետևած ոչ պակաս սարսափելի «համաշխարհային լրության» հետևանքով:

«Ամենայն հավանականությամբ, ժամանակակից հայերի գիտակցության մեջ, – գրում է Ա. Լուրեն, – սփյուռքը հանդես է գալիս որպես ազգային մշակութային ինքնության այլընտրանքային օջախ, որպես ինքնանույնականացման գործոն «մայրական էթ-

նոսի» պայմաններում» [9, էջ 506]:

Ավելին՝ «Մշակույթը, – գրում է Է. Հարությունյանը, – մի հավաքական «մենք» է, որի մեջ լինելը մարդու սոցիալական գոյության միակ երաշխիքն է: Այդ մշակութային «մենքը» մեր հոգու խորխատներում թաքնված ազգային ոգու անորսալի մի ներկայություն է, որը մշտապես «խառնվում» է լյանքի մասին մեր պատկերացումներին՝ անհմանալի ինչ-ինչ հնարքով դրանց տալով «հայկականության» հատուկ գույն ու երանգ: Այդ իմաստով «հայկականությունը» այլընտրանքային իրավիճակներում ընտրություն կատարելու էթնոմշակութային էկզիստենցիալ մի գոյավիճակ է, գոյաբանական մի տարածություն, որտեղ կերտվում է մեր ազգային ճակատագիրը: Մշակութային այդ գոյավիճակից փախուստը գրեթե անհնարին է, քանի որ մենք մշտապես նրա մեջ ենք և նրա միջոցով կանք որպես «հայկականության» մի մասնիկ» [5, էջ 6]: Մեծ է մշակույթի, հատկապես գրականության դերը հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման գործում:

Ի տարբերություն 20-րդ դարասկզբին Ամերիկայում ձևավորված ամերիկյան ազգային ինքնության՝ լեզուն, կրոնը, պատմական հիշողությունը, կենցաղը, պատմական զարգացման արդյունքում ձևավորված պատկերացումների և վարքի նորմերի ամբողջությունը, մշակութային ավանդույթներն ու սովորույթները, հոգեբանությունն ու արժանապատվությունը կազմում են հայ ազգային ինքնության ընդհանուրական որակը, որը ձևավորվում է ներազգային շփումների, փոխներգործությունների և համակեցության արդյունքում, ինչը նշանակում է, որ ազգային ինքնության մեջ ամփոփված են անցյալում ձևավորված զգացմունքները, գաղափարներն ու պատմական հիշողությունը: Այս տեսակետից՝ ազգը մի յուրահատուկ «հավաքական մարմին» է՝ իրեն բնորոշ «հավաքական ոգով ու հոգով», և ամեն մի նոր սերունդ շարունակում է իր նախորդների կերտած պատմությունը, դառնում ազգային կյանքի կազմակերպման «մշակութային գանձարանի» իրավահաջորդը, ինչը խիստ կարևոր է ազգային ինքնության շարունակականությունն ապահովելու առումով:

Ինքնության փնտրութի գրականության մարդն ապրում է առօրյա, երկիմաստությամբ և անորոշությամբ լի մի աշխարհում, որտեղ նա կարող է կորցնել իր դիմագիծը. կարող է հեռանալ ինքն իրենից: Նմանատիպ ինքնության փնտրութի ճանապարհին է կանգնած իրեա ժողովուրդը, որը ապրում է էկզիստենցիալ պայքար՝ սեփական ինքնության և օտար երկրում ձուլվելու հակադիր քններներին բախվելով: Եվ ինչպես տարբերակում է գերմանացի փիլիսոփա Ս. Հայդեգերը, մարդկային գոյության երկու եղանակ կա՝ անխսկական և խսկական: Անխսկական է այն կեցությունը, երբ մարդը, ամբողջությամբ թաղվելով առօրյա հոգսերի մեջ, ենթարկվելով իրերի և հանգամանքների իշխանությանը, ապրելով ուրիշների նման, չի մտածում մահվան, իր վերջավոր լինելու մասին: Դա օտարված, իր անհատականությունը կորցրած, ցանկացած ուրիշով փոխարինելի մարդն է: Խսկական է այն կեցությունը, երբ մարդը հանդես է զայխ որպես իր պատմականությունը և ազատությունը գիտակցող էակ: Խսկական գոյությունը սկսվում է այն պահից, երբ մարդը զգում է «մետաֆիզիկական» վախ ոչնչի կամ մահվան հանդեպ: Վախի միջոցով մարդը բացահայտում է իր գոյության խորհուրդը, ձեռք բե-

բում իսկական ազատություն [7, էջ 125]: Այս պարագայում կարող ենք փաստել, որ Հայ-դեզերի նշած դրույթները համատեղ առկա են իրեա-ամերիկյան գրականության մեջ, որտեղ համաձայն առաջին դրույթի՝ նրանց գոյությունը կարծես թե համաձույլ է այլ մշակույթին, իսկ մյուս պարագայում՝ հստակորեն գիտակցվում է սեփական ինքնության կարևորությունը:

Մարդու իսկական գոյությունը բացահայտվում է, այսպես կոչված, սահմանային իրադրություններում: Մարդը մշտապես գտնվում է որոշակի իրավիճակների մեջ, սակայն կան վիճակներ, ինչպիսիք են՝ վախը, մեղքը, պայքարը, տառապանքը և այլն, որոնք մարդուն ստիպում են խորհել սեփական կեցության իմաստի և կոչումի մասին: Սահմանային իրադրություններում մարդը դուրս է գալիս առօրյա կյանքի սահմաններից և հաղորդակցվում է բացարձակ կեցության, տրանսցենդենտալ ոլորտի հետ: Հենց այս կեցության տրանսցենդենտալ ոլորտի հետ է բախվում հետզադութային գրականությունը, որի հերոսները սահմանային իրավիճակների անմիջական կրողներն են:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հայ-ամերիկյան էթնիկ գրականությունը ամերիկյան գրականությունից առանձնանում է ամերիկահայության առջև ծառացած իր էթնիկական, հոգեբանական խնդիրներով, սերնդեսերունդ փոխանցված ավանդույթներով, սովորույթներով, կենսափորձով, վարքութարքով, հավատալիքների պահպանմամբ, ազգը շարունակաբար վերածնող, վերահմաստավորող, վերականգնող էթնիկ հիշողությամբ ու մշակույթով:

Ենելով ժամանակի մարտահրավերներից, մարդու օտարման խնդրից՝ ամերիկահայ հայագիր և անզլազիր գրողները փորձել են պահպանել հայի ազգային ինքնությունը, մարդկությանը ներկայացրել հայ ժողովրդի դարավոր պատմությունը, օտար իրականության մեջ հայի ճակատագրի և կեցության խնդիրները, մշակույթը, ցեղասպանության հարցը՝ տալով դրա պատմաքաղաքական, ազգային և բարոյահոգեբանական գնահատականը, դառնալով ցեղասպանության դատապարտման պահանջատերը: Հայ-ամերիկյան գրողներն իրենց ստեղծագործություններում որպես օտարներին չեղուկ կովան արժնորել են հայ էթնոսի, ազգային ինքնության պահպանումը՝ շեշտադրելով էթնիկական հիշողությունը, գեղարվեստական մտածողության համաձիրում շոշափել նախնյաց ազգային դիմորոշության հիմնարար ելազգեր:

Ամերիկահայության և առհասարակ սփյուռքահայության համար ազգային ինքնության պահպանումը ազգային մտածողության ու հոգեկերտվածքի հիմնարար գծերին, պատմական հիշողությանը, կրոնին, մշակութային ավանդույթներին ու սովորույթներին հավատարիմ մնալն է: Ամերիկահայ անզլազիր արձակագիրների ստեղծագործություններում ազգային ինքնության նկարագիրը պարզող ընդհանրական որակ են կազմում հայ-ամերիկյան էթնիկ գրականության հենքը կազմող ազգային արժանապատվության գիտակցումը, կենցաղի առանձնահատկությունները, պատմական զարգացման արդյունքում ձևավորված աշխարհայեցողության, ընկալումների և վարքի նորմերի ամբողջությունը:

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Գալստյան Բ.** Եկղանունշալիզմը և Վ. Սարոյանի դրամատորգիան: Երևան: «Ճարտարագետ» հրատ.: 2015: 148 էջ:
2. **Մուշեղ Եպիսկոպոս** Ամերիկանց տարեցոյց: Պոստոն: «Կիլիկիա» տպարան: 1912, Ա տարի: 531 էջ:
3. **Գեմիրճյան Մ.** Ազգային ինքնուղյունը՝ ժամանակակից արժեքային փոխակերպումների համատերւում // «Վեմ» համահայկական հանդես: Երևան: 2018: Ժ (Ժ2) տարի, հունվար-մարտ, թիվ 1 (61): 91-106 էջեր:
4. **Գեմիրճյան Մ.** Հայ ազգային ինքնուղյունը և Ավյուղի գործոնը գորքարացվող աշխարհում // «Անախտիկոն» ամսագիր: Ստեփանակերտ: 2018, 04 (112): 27-31 էջեր: Էլ. հղում <http://ysu.am/files/1-1548136936-.pdf> (մուտք՝ 06.02.2024):
5. **Հարությունյան Է.** Սեղունդների աշխարհ և ժամանակակիցների աշխարհ // «Բանրեր Երևանի համապարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» ամսագիր: Երևան: 2019, № 2 (29): 3-15 էջեր:
6. **Hatfield J.T.** Anyone who wants to find their true identity must stand between tradition, culture, and even the paradox of identity. Identity as Theory and Method for Ethnic Studies. Vol. 9, No. 1, January 1986, 25-51 pp..
7. **Heidegger M.** *Being and time. Hardcover*. August 1, 1962 by Harper & Row (NYC/ Evanston). 589 p.
8. Huntington S.P. *Who Are We?: The Challenges to America's National Identity*, N.Y, Simon & Schuster, 2005, 330 p.
9. **Лурье С.** Историческая этнография: Учебное пособие для вузов. М.: Академический Проект: Гаудеамус. 2004, 624 с.
10. **Микаелян В.** История крымских армян / Ин-т истории НАН Республики Армения. Крымское армянское общество. Киев, Ереван; Симферополь: "Энергия Плюс" изд.. 2004, 224 с.
11. **Питерская С. Чапыгин А.** Национальная идентичность и американская мечта // Гуманитарные научные исследования. 2018. № 1 [Электронный ресурс]. URL: Էլ. հղում <https://human.snauka.ru/2018/01/24792> (մուտք՝ 26.01.2024).
12. **Садохин А.** Основы этнографии. М.: Изд-во "Юнити" изд.. 2003. 351 с.
13. **Шестаков В.** США: Псевдокультура или завтрашний день Европы? М.: Изд-во ЛКИ. 2010. 224 с.

R e f e r e n c e s

1. **Galstyan B.** Existentialism and W. Saroyan's Dramaturgy. [*Ezkistencializme ev W. Saroyani dramaturgian*]. Yerevan. "Engineer" magazine. 2015. 148 p. (in Armenian)
2. **Mushegh Bishop** Armenian-American Annual Statistical Data Book. [*Americahay tarecuyc*]. Boston. "Cilicia" printing-house. 1912, year A. 531 p. (in Armenian)
3. **Demirchyan M.** National Identity in the Context of Modern Value Transformations. [*Azgayin inqnutune jamanakakic arjeqayin pokhakerpumneri hamateqstum*] // Pan-Armenian magazine "Vem". Yerevan. 2018. Z (ZZ) year, January-March, No. 1 (61). 91-106 pp. (in Armenian)
4. **Demirchyan M.** Armenian National Identity and the Diaspora Factor in the Globalizing World. [*Hay azgayin inqnutune ev Spurqi gorcone globalavokh ashkharhun*] // "Analiticon" magazine. Stepanakert. 2018, 04 (112). 27-31 pp.. <http://ysu.am/files/1-1548136936-.pdf> (մուտք՝ 06.02.2024). (in Armenian)
5. **Harutyunyan E.** The World of Generations and the World of Contemporaries. [*Serundneri ashkharh*] // "Articles of Yerevan University." Philosophy, Psychology" magazine. Yerevan. 2019, No. 2 (29). 3-15 pp.. (in Armenian)
6. 6 – 8, See: Bibliography)
9. **Lurie S.** Historical Ethnology. Tutorial for Bonds. [*Istoricheskaya etnologia*]. M. Academic Project: Gaudeamus. 2004. 624 p. (in Russian)
10. **Mikaelyan V.** History of Crimean Armenians. [*Istoria krimskikh armyan*]. Kiev, Yerevan; Simferopol. Energy Plus. 2004, 224 p. (in Russian)

11. Peterskaya S. Chapigin A. National Identity and the American Dream//Humanitarian Scientific Studies. [Nacionalnaya identichnost i americanskaya mechta/ Gumanitarnie nauchnie issledovaniya]. 2018. № 1[Electronic Resource]. URL: E-mail: reference. <https://human.snauka.ru/> 2018/ 01/24792 (մուլտ՝ 26.01.2024). (in Russian)
12. Sadokhin A. Basics of ethnology. [Asnovi etnologii]. M.: Publishing house "Unity". 2003. 351 p. (in Russian)
13. Shestakov V. USA: Pseudoculture or tomorrow's day of Europe? [Psevtokultura ili zavtreshni den Evropei]. M.: Publishing house LKI. 2010, 224 p. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: **05.09.2024**
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **24.09.2024**
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12.12.2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Նելլի Բակուրի ԳԱԼՍՏՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու

Մովսես Խորենացու անվան համալսարանի
արտասահմանյան գրակ. և անգլերենի դասախոս, Երևան, <<
Էլ. հասցե: hasmikbakurgalstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378

Nelli Bakur GALSTYAN: Ph.D. in Philology University after M. Khorenatsi,
Lecturer of Foreign Literature and English Language, Yerevan, RA,
e-mail: hasmikbakurgalstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378

Нелли Бакуровна ГАЛСТЯН: канд. филол. наук.
преподаватель иностранной литературы и английского языка
университета им. Мовсеса Хоренаци, Ереван, РА,
эл. адрес: hasmikbakurgalstyan@mail.ru // orcid.org/0009-0003-3973-4378